ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №1
№ԳՀԱՊՁԲ-20-21/2-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան

01.10.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ի. Անդրեասյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, հիմք ընդունելով 07.07.2020թ. կնքված №ԳՀԱՊՁԲ-20-21/2-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայնագրի №1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին որպես սեփականություն հանձնել Պայմանագրի №1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. **Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի №1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 9 996 000 (ինը միլիոն ինը հարյուր իննսունվեց հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով և սույն համաձայնագրի N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով:

3. **Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի №1 և №2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

4. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Վարդանանց 18/2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011024537	Հ/Հ 20500221516310 01
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 02508699
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ	Տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Ի. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-21/2-1համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Չ/մ	Քանակը	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/	Ապրանքների մատակարարումը 2020թ. ըստ եռամսյակների, ընդ որում՝
						4-րդ, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ.
1	Համակարգիչ ամբողջը մեկում (Գլխավոր աշխատանքային կայան)	հատ	1	9996000	9996000	1

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-21/2-1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման առարկայի			Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ քան 20.12.2020թ. ընդ որում՝
Հ/հ	անվանումը	CPV կոդը	4-րդ
1	Համակարգիչ ամբողջը մեկում (Գլխավոր աշխատանքային կայան)	30211280/501	9996000

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ տնօրեն

Ի. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ